ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 01. 09. 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն 3
2. Նպատակ 3
3. Ընթացակարգ 3
4. Հոսքի/ խորացված առարկայի փոփոխություններ 4
5. Հատուկ դեպքեր 4
Ծանոթություն 5

1. **Փիլիսոփայություն**

1.1. Խորացված ուսուցումը մինչբուհական կրթության համակարգ է, որը նպատակաուղղված է ԱԴ ուսանողի ապագա մասնագիտությանն առնչվող առարկաների համակողմանի ուսումնասիրմանը, հիմնարար գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև հետագա կրթության շարունակականության ապահովմանը:

2. **Նպատակ**

Խորացված ուսուցման նպատակն է.

2.1. կազմակերպել համակարգված աշխատանքներ՝ բացահայտելու ԱԴ ուսանողների մասնագիտական հակումները
2.2. իրականացնել կրթական ծրագրի գաղափարախոսության, ուսումնական և դաստիարակչական նպատակներ՝ արդյունավետ դասավանդման և ուսումնառության խթանման միջոցով
2.3. ապահովել համապատասխան բուհի ընդունելության քննությունների պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայությունը:

3. **Ընթացակարգ**

Խորացված ուսուցման կազմակերպման գործընթացը սկսվում է ընթացիկ ուսումնական տարվա ավարտին՝ մայիս ամսին, հաջորդ ուստարվա համար՝ հետևյալ ընթացակարգով.

3.1. Առարկայական ամբիոնների ղեկավարները ոչ ուշ քան մինչև մայիսի 15-ը ԱԴ հեղինակային ծրագրի համակարգողին ներկայացնում են հաջորդ ուստարում խորացված ուսուցման համար նախատեսված առարկաների ցանկը, ծրագրերը և դասավանդող ուսուցիչների անվանացանկը:
3.2. ԱԴ հեղինակային ծրագրի համակարգողի կողմից մինչև մայիսի 25-ը կազմվում և էլ.փոստով ուսանողներին ուղարկվում է հոսքերի և խորացված ուսուցմամբ առարկաների ընտրության հարցաթերթ, որի լրացման վերջնաժամկետը հունիսի 1-ն է: *

3.3. Հարցաթերթում ուսանողներին առաջարկվում են հոսքեր՝ համապատասխան խորացված առարկաներով:** SAT և TOEFL խորացված

առարկաները վճարովի հիմունքներով են՝ համաձայն տնօրենության կողմից հաստատված գնացուցակի:***

3.4. Ուսպլանով նախատեսված մնացած առարկաները ուսումնասիրվում են հենքային ծրագրով, ընդ որում ընդհանուր ժամաքանակը պետք է լինի 34 ժամից ոչ պակաս և ոչ ավելի քան 38 ժամ՝ կախված խորացված ուսուցման համար ընտրված առարկաներից:****

3.5. Ուսումնական մասի կողմից ըստ լրացված հարցաթերթերի ձևավորվում են խորացված և հենքային ուսուցման խմբերը, որի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացվում են ամբիոնների ղեկավարներին: *****

3.6. Ստացված տեղեկատվության հիման վրա, ամբիոնների ղեկավարները կատարում են մնացած ժամերի բաշխումը և մինչև հունիսի 15-ը ներկայացնում են այն կրթահամալիրի տնօրենի հաստատմանը:

3.7. Հաստատված ժամաբաշխման հիման վրա կազմվում է ԱԴ-ի դասացուցակը:

3.8. Կազմված և հաստատված դասացուցակը ոչ ուշ քան մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 20-ը էլեկտրոնային փոստով ուղարկվում է ԱԴ համայնքին:

4. Հոսքի/ խորացված առարկայի փոփոխություններ

4.1. Հոսքի կամ խորացված առարկայի փոփոխության վերաբերյալ դիմումներ ընդունվում և քննարկվում են կիսամյակի սկզբում՝ երկշաբաթյա ժամկետում: Դիմումներն ուսումնասիրվում և քննարկվում են ԱԴ տնօրենի, ԱԴ հեղինակային ծրագրի համակարգողի և գլխավոր տեսուչի կողմից:

4.2. Տնօրենության հաստատման դեպքում փոփոխված դասացուցակը տրամադրվում է ուսանողին նշված ժամկետից հետո երեք օրվա ընթացքում:

4.3. Խորացված առարկայի փոփոխության հնարավորություն տրվում է նաև կիսամյակի ավարտին՝ նոր ընտրված առարկայից քննություն հանձնելուց հետո, դրական արդյունքի դեպքում:

5. Հատուկ դեպքեր

5.1. Ծնողի դիմումի համաձայն և ԱԴ տնօրենի թույլտվությամբ կարող է կազմակերպվել նաև ինքնուսուցում խորացված ուսուցմամբ մեկ, իսկ

հենքային ուսուցմամբ ոչ ավել, քան երկու առարկաների համար՝ համաձայնեցնելով դասավանդող ուսուցչի/ների հետ:

5.2. Ծնողի դիմումի համաձայն վճարովի հիմունքներով առաջարկվում են նաև գծագրություն, գծապատկեր, կոմպոզիցիա խորացված ուսուցմամբ առարկաները՝ տնօրենության կողմից հաստատված գնացուցակով:*** Դասընթացները կազմակերպվում են ճեմարանից դուրս:

Ծանոթություն

* 1. Հարցմանը չմասնակցած ուսանողները ներկայացնում են բացատրագիր և, բացատրագիրը ստանալուց հետո, մեկ աշխատանքային շաբաթվա ընթացքում ուսանողին տրամադրվում է դասացուցակ:

**2. - Եթե ուսանողի կողմից նախընտրելի խորացված ուսուցմամբ առարկան չի առաջարկվում տվյալ հոսքում, ապա անհրաժեշտ է մինչև հունիսի 1-ը ներկայացնել դիմում ԱԴ տնօրենին՝ խորացված ուսուցմամբ առարկայի փոփոխման վերաբերյալ՝ նշելով պատճառը:

***3. Վճարովի հիմունքներով խորացված առարկաների գնացուցակը տրամադրվում է հարցաթերթի հետ միասին:

****4. - Բացառիկ դեպքերում որպես խորացված ուսուցմամբ երկու բնագիտական առարկա ընտրած ուսանողների մոտ շաբաթական ժամաքանակը կարող է լինել 40 ժամ:

*****5.- Խորացված ուսուցմամբ խմբերում, որպես կանոն, ընդգրկվում են մինչև 12, հենքայիններում՝ մինչև 18 ուսանողներ: Մասնավոր դեպքերը կքննարկվեն առանձին:

Կազմեցին՝

Կրթական ծրագրերի զարգ. փոխտնօրեն՝	Գագիկ Թոռչյան
Ավագ դպրոցի տնօրեն՝	Տաթևիկ Արզումանյան
Ուսումնամեթոդական գծով փոխտնօրեն՝	Աննա Ստեփանյան
Տեսչական աշխատանքների համակարգող՝	Ռուզաննա Բուլության
Ավագ դպրոցի հեղինակային ծրագրի համակարգող ՝	Արուսյակ Արզումանյան